ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սույն հայտարարությունը հաստատված է Մրցութային հանձնաժողովի «N 2022/1» որոշմամբ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝

1. «Հայաստանի դեմոկրատական» կուսակցության,
2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության,
3. «Մեր տունը Հայաստանն է» կուսակցության,
4. «Հայրենիք» կուսակցության,
5. «Ապրելու երկիր» կուսակցության,
6. «Հայաստանի Հանրապետական» կուսակցության,
7. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության,
8. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության,
9. «Հանրապետություն» կուսակցության,
10. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության,
11. «Լուսավոր Հայաստան» կուսակցության

2021 թվականի տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով:

Մրցույթի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 3-ով:

Մրցույթին մասնակցելու սահմանափակումները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 4-ով:

Մրցութային առաջարկների պատրաստման և ներկայացման կարգը, ներկայացման ժամկետը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 6-ով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 2-ով: Մեկից ավելի կուսակցությունների տարեկան հաշվետվության աուդիտի համար մրցութային առաջարկ ներկայացնելու դեպքում դիմումում նշվում են համապատասխան կուսակցությունների անվանումները և մրցույթների ծածկագրերը:

Մրցույթի տեխնիկական առաջարկի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 3-ով:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման շրջանակները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 10-ով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին կառաջարկվի կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր: Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի արժեքը կազմում է՝

N	Մրցույթի ծածկագիր	Կուսակցության անվանում	Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)
1	ԿՏՀԲՄԾ-2022/1	«Հայաստանի դեմոկրատական» կուսակցություն	1.170.000
2	ԿՏՀԲՄԾ-2022/2	«Վերածնվող Հայաստան» կուսակցություն	1.194.000
3	ԿՏՀԲՄԾ-2022/3	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	1.230.000
4	ԿՏՀԲՄԾ-2022/4	«Հայրենիք» կուսակցություն	1.455.000
5	ԿՏՀԲՄԾ-2022/5	«Ապրելու երկիր» կուսակցություն	1.485.000
6	ԿՏՀԲՄԾ-2022/6	«Հայաստանի Հանրապետական» կուսակցություն	3.120.000
7	ԿՏՀԲՄԾ-2022/7	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	2.320.000
8	ԿՏՀԲՄԾ-2022/8	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	960.000
9	ԿՏՀԲՄԾ-2022/9	«Հանրապետություն» կուսակցություն	810.000
10	ԿՏՀԲՄԾ-2022/10	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	4.800.000
11	ԿՏՀԲՄԾ-2022/11	«Լուսավոր Հայաստան»	840.000

Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 5-ով:

Սույն հայտարարությունը կազմվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի, «Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածի, Որոշման և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք. Երևան 0009, Կորյունի 15 հասցեով, թղթային ձևով, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 15-րդ օրը՝ ***2022 թվականի հուլիսի 8-ը ներառյալ՝ ժամը 11:00-ն***:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերենով:

Մրցութային առաջարկների բացումը տեղի կունենա ՀՀ, ք. Երևան 0009, Կորյունի 15 հասցեում, ***2022 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 11:00-ին:***

Աուդիտորական ծառայությունները պետք է մատուցվեն, իսկ աուդիտորական եզրակացությունը պետք է ներկայացվի մինչև ***սույն թվականի սեպտեմբերի 9-ը:***